ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ Ն ԱՆ-ԴՏՊ-ԹԱԿ-1

ք. Երևան

Առողջապահության նախարարությունը, ի դեմս՝ Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պետական մարմին), մի կողմից, և ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Արտակ Մանուկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն), մյուս կողմից (երկուսը միասին կհիշատակվեն նաև որպես Կողմեր, իսկ առանձին՝ որպես Կողմ), հիմք ընդունելով կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 1629-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), կնքեցին Դրամաշնորհի հատկացման սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2022 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1188 «Դեղապահովում» ծրագրի 12001 «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման (Ծրագրի միջոցառում), իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել՝ մինչև 43,194,762.0 (քառասուն երեք միլիոն հարյուր իննսունչորս հազար յոթ հարյուր վաթսուն երկու) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագրի միջոցառումն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի Հավելված 1-ում.

1.3 Սույն պայմանագրի անբաժանելի մասն են կազմում հետևյալ հավելվածները՝

Հավելված 1. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ (ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ),

Հավելված 2. Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված Ծրագրի միջոցառման մասին Պայմանագրի 2.4.4 կետում նշված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել, դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն, իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի միջոցառումների և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել՝ միջոցառումների իրականացման մասին պայմանագրի Հավելված 2-ով հաստատված Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն մինչև ամփոփ հաշվետվություն՝ ոչ ուշ քան **31.07.2023թ.**:

2.4.6. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունը չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրի Ծրագրի միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, այդ միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները վերադարձնելու պետական բյուջե, պայմանագրի ավարտից հետո:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7.2. Պայմանագիրը կազմված է 6 (վեց) էջից, կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
Առողջապահության նախարարություն	ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3,	Հասցե՝ ք. Աբովյան, Արզնու խճուղի 10
Բանկ՝ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկ՝ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237	Հ/Հ 900018005190
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 01243384
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝ Արտակ Մանուկյան
Վարդանուշ Գրիգորյան	
GRIGORYAN VARDANUSH 6802780100 Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100 DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM Дата: 2022.11.24 15:37:55 +04'00'	MANUKYAN ARTAK 1709810459 Digitally signed by MANUKYAN ARTAK 1709810459 DN: c=AM, st=++++++++++, givenName=++++++, serialNumber=49abab4d31f5, cn=MANUKYAN ARTAK 1709810459 Date: 2022.11.23 11:58:18 +04'00'
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
N ԱՆ-ԴՏՊ-ԹԱԿ-1
պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ (ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ)

.11.2022թ.-31.07.2023թ.-ի ժամանակահատվածի աշխատանքային պլան

Իրականացվելիք Ծրագրի միջոցառման							
N	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը			Գին (ՀՀ դրամ)	վերջնաժամկետը
			Դեղի անվանում	Չափման միավոր	կողմնորոշիչ թիվ/չափաքանակ		
	Դեղապահովում	Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	***Առաջին շարքի դեղորայք***				31.07.2023թ.
			Ռիֆամպիցին 150mg/Իզոնիազիդ 75mg/	տուփ	239	5,001,370.7	
			Ռիֆամպիցին 75mg/Իզոնիազիդ 50 mg	տուփ	35	292,917.7	
			Ռիֆամպիցին 75mg/Իզոնիազիդ 50mg/Պիրազինամիդ 150 mg	տուփ	20	199,948.0	
			Ռիֆամպիցին 150mg/Իզոնիազիդ 75mg/Պիրազինամիդ 400mg/Էթամբուտոլ 275mg	տուփ	132	4,933,778.3	
			Իզոնիազիդ 100mg	տուփ	39	447,277.5	
			Ռիֆամպիցին 150mg	տուփ	12	166,097.7	
			Էթամբուտոլ 100mg	տուփ	24	482,533.2	
			Էթամբուտոլ 400mg	տուփ	21	458,210.9	
			Պրոթիոնամիդ 250 mg	տուփ	38	412,229.4	
			Ռիֆամպիցին 300mg	տուփ	245	3,015,978.1	
			Պիրազինամիդ 400mg	տուփ	26	369,612.1	
			Երկրորդ շարքի դեղորայք				
			Կլոֆազիմին 100մգ N100	տուփ	200	8,902,353.6	
			Ցիկլոսերին 250մգ N100	տուփ	500	7,897,297.9	
			Լինեզոլիդ 600մգ N100	տուփ	149	3,398,654.6	
			Բեդակվիլին 100մգ N188	տուփ	40	7,216,502.2	
			Ընդամենը		***1720***	***43,194,762.0***	

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք.Երևան,Կառավարական տուն 3
Բանկ՝ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

Կազմակերպություն

ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

ք. Աբովյան, Արզնու խճուղի 10

ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

ԱՆ գլխավոր
քարտուղար՝

GRIGORYAN VARDANUSH 6802780100

Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Дата: 2022.11.24 15:38:07 +04'00'

Վարդանուշ Գրիգորյան
(ստորագրություն)

Հ/Հ 900018005190
ՀՎՀՀ 01243384

Տնօրեն՝

_____ Արտակ Մանուկյան
(ստորագրություն)

MANUKYAN ARTAK 1709810459

Digitally signed by MANUKYAN ARTAK 1709810459
DN: c=AM, sn=•••••••••,
givenName=•••••,
serialNumber=49aba9dd31f5,
cn=MANUKYAN ARTAK 1709810459
Date: 2022.11.23 11:56:18 +04'00'

Հավելված 2
Ն ԱՆ-ԴՏՊ-ԹԱԿ-1 պայմանագրի

ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ծրագրի միջոցառման աշխատանքային պլանի կատարողական հաշվետվություն
. .2022թ.- . .2023թ.-ի ժամանակահատվածի համար

N	Դեղերի անվանումը	Չափման միավոր	Գին (ՀՀ դրամ)	2022թ.-2023թ.-ների կողմնորոշիչ թվաքանակ/չափաքանակ	2022թ.-2023թ.-ների փաստացի թվաքանակ/չափաքանակ	Ընդամենը գումար (հազար դրամ)	Շեղումների բացատրություն, լրացվում է տարեկան արդյունքների համար
1	2	3	4	5	6	7	8
1							
2							

*«Գին» և «Ընդամենը գումար» (4 և 7) սյունակները կարող են չլրացվել

Պետական մարմին

Առողջապահության նախարարություն

Հասցե՝ ք. Երևան,Կառավարական տուն 3,

Բանկ՝ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011105237
ՀՎՀՀ 02507171

ԱՆ գլխավոր քարտուղար՝

GRIGORYAN VARDANUSH 6802780100

Подписано: GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Дата: 2022.11.24 15:38:48 +04'00'

Կազմակերպություն

ԱՆ «Թոքաբանության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ

ք. Աբովյան, Արզնու խճուղի 10

ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900018005190
ՀՎՀՀ 01243384

Տնօրեն՝

_____ Արտակ Մանուկյան

MANUKYAN ARTAK 1709810459

Digitally signed by MANUKYAN ARTAK 1709810459
DN: c=AM, sn=-------, givenName=-----, serialNumber=49aba9dd51f5, cn=MANUKYAN ARTAK 1709810459
Date: 2022.11.24 10:42:30 +04'00'